



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«01» 02.2019.

Հ Ր Ա Մ Ա Ն N 32-Ա

ԱԵՐՈՂՐՈՄԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՕԴԱՅԻՆ
ԽՈՉՂՆԴՈՏՆԵՐԻ ԿԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության՝ ԻԿԱՕ N 9137 ձեռնարկի (Doc.9137) Մաս 6-ի, N 9734 ձեռնարկի (Doc.9734) Մաս Ա-ի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 23-ի «ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմանները հաստատելու մասին» N 64-Ն հրամանի դրույթներով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների վերահսկողության ուղեցույցը» և «Աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների կառուցման թույլտվությունների տրամադրման և առկա խոչընդոտների վերահսկողության ուղեցույցը» համաձայն հավելվածների:
2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Տ. Բայբուրտյանին՝ սույն հրամանը տեղեկացնել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերությանը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

 Recoverable Signature

X *Tatevik Re*

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

2019 թվականի փետրվարի 1-ի
թիվ 32-Ա հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԱԵՐՈՂՐՈՄԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՕՂԱՅԻՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ
ԱՌԿԱ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

1. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների (այսուհետ՝ խոչընդոտ) կառուցման թույլտվությունների տրամադրման և առկա խոչընդոտների վերահսկողության ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսիս 3-ի N825-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ օդային տարածքի կազմակերպման կարգի», Չիկագոյին Կոնվենցիայի N14 և N15 Հավելվածների, ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի Մաս 6-ի և Գլխավոր վարչություն պետի 2007 թվականի ապրիլի 27-ի N68-Ն հրամանով հաստատված «ՀՀ միջազգային և ներքին օդանավակայանների աերոդրոմների սերտիֆիկացման կարգով» սահմանված պահանջների համաձայն և սահմանում է Կոմիտեի կողմից աերոդրոմի շրջակայքում խոչընդոտների կառուցման թույլտվությունների տրամադրման և առկա խոչընդոտների վերահսկողության գործընթացը:

2. Սույն ուղեցույցի իմաստով՝

1) Աերոդրոմ շահագործող է համարվում օդանավակայանի սեփականատերը կամ այն իրավաբանական անձը, որն իրականացնում է օդանավակայանի շահագործումը կամ կոնցեսիոն կառավարումը:

2) Աերոդրոմի շրջակայք է համարվում օդային տարածքի այն մասը, որը գտնվում է աերոդրոմի ու դրան կից տեղանքի վրա և նախատեսված է աերոդրոմում թռիչք-վայրէջքներ կատարելու համար ու օդային մայրուղիներ մուտք (ելք) գործելու համար, ինչպես նաև այն հողային տեղամասը, որն ընկած է աերոդրոմի տեղորոշիչ կետից 15 կմ շառավիղի սահմաններում:

3) Աերոդրոմի տեղորոշիչ կետ է համարվում վաքուղու կենտրոնում կամ ծայրում գտնվող կետը, որը որոշում է աերոդրոմի աշխարհագրական դիրքը:

4) Խոչընդոտներ են համարվում բոլոր ժամանակավոր կամ մշտական անշարժ (արհեստական կամ բնական) օբյեկտները կամ դրանց մասերը, որոնք գտնվում են օդանավերի գետնավարման գոտիներում կամ գերազանցում են թռիչքների համար սահմանված հարթությունների մակերևույթները:

3. Ըստ թռիչքների համար նախատեսված ազատ գոտիների աերոդրոմի շրջակայքը բաժանվում է հետևյալ հարթությունների՝

1) Կոնային - թեք հարթություն է, որի ստորին սահմանը համընկնում է ներքին հորիզոնական հարթության մակերևույթի վերին սահմանի հետ և հանդիսանում է վերջինիս շարունակությունը:

2) Ներքին հորիզոնական - ներքին հորիզոնական հարթությունը հորիզոնական շրջան է, որը գտնվում է անտրոդրոմի և մերձանտրոդրոմային օդային տարածքում: Շրջանի շառավիղը և բարձրությունը սահմանվում են անտրոդրոմի տեղորոշիչ կետի նկատմամբ:

3) Վայրէջքի - հարթությունն իրենից ներկայացնում է երկրաչափական սեղանի ձևով հարթություն, որը գտնվում է վազքուղու շեմերի շարունակության վրա: Վայրէջքի կորագծային սխեմաների կամ դրանց շեղվածության դեպքերում հնարավոր է վայրէջքի հարթության ձևի փոփոխում: Վայրէջքի հարթության ներքին սահմանի հարաբերական բարձրությունը հավասար է վազքուղու տվյալ շեմի հարաբերական միջին բարձրությանը, իսկ թեքությունները սահմանվում են վայրէջքի առանցքագծով անցնող ուղղահայաց մակերեսի նկատմամբ: Վայրէջքի հարթության սահմաններ են՝

ա. ներքին սահմանը - սեղանի հիմքերից մեկը, որը ուղղահայց է վազքուղու առանցքագծի շարունակությանը և գտնվում է վազքուղու շեմերից սահմանված հեռավորության վրա,

բ. եզրային սահմանները - սեղանի կողմերը, որոնք սկսվում են վայրէջքի ներքին մակերևույթի սահմանից և հավասարաչափ շեղված են վազքուղու առանցքագծի նկատմամբ,

գ. արտաքին սահմանը - սեղանի երկրորդ հիմքը:

4) Վայրէջքի ներքին - հարթությունն իրենից ներկայացնում է ուղղանկյուն, որը գտնվում է անմիջապես վազքուղու շեմի առջև: Վայրէջքի ներքին հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը - սահմանված երկարությամբ վազքուղու առանցքագծին ուղղահայաց, որը համընկնում է վայրէջքի հարթության ներքին սահմանի հետ,

բ. եզրային սահմանները - սահմանված երկարությամբ վազքուղու առանցքագծին զուգահեռներ, որոնք սկսվում են հարթության ներքին սահմանից,

գ. արտաքին սահմանը - հարթության ներքին սահմանին զուգահեռ:

5) Անցումային - իրենից ներկայացնում է բարդ հարթություն, որը տեղաբաշխված է վազքուղու թռիչքային գոտու և վայրէջքի հարթության երկայնքով և թեքությամբ տարածվում է վեր՝ մինչև ներքին հորիզոնական հարթությունը: Անցումային հարթության հարաբերական բարձրությունը վայրէջքի հարթության երկայնքով համապատասխանում է վերջինիս բարձրությանը, իսկ թռիչքային գոտու երկայնքով՝ վազքուղու առանցքագծի մոտակա կետի բարձրությանը: Հարթության երկայնքով թեքությունը հաշվարկվում է վազքուղու առանցքագծով անցնող ուղղահայաց հարթության նկատմամբ, իսկ ճակատային հատվածների թեքությունը՝ վազքուղու առանցքագծին ուղղահայաց: Անցումային հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը, որը սկսվում է վայրէջքի և ներքին հորիզոնական հարթությունների հատման եզրային սահմանից և տարածվում է ներքև վայրէջքի հարթության եզրի երկայնքով մինչև վայրէջքի հարթության ներքին սահմանը՝ վազքուղու առանցքագծին զուգահեռ;

բ. վերին սահմանը, որը համընկնում է ներքին հարթության մակերեսի սահմանի հետ:

6) Ներքին անցումային - վազքուղուն ավելի մոտ գտնվող անցումային հարթությանը համանման հարթություն: Ներքին անցումային հարթության ստորին սահմանի հարաբերական բարձրությունը, վայրէջքի և երկրորդ շրջանի հարթությունների երկայնքով, համապատասխանում է կոնկրետ հարթության բարձրությանը, իսկ թռիչքագոտու երկայնքով՝ վազքուղու առանցքագծի կամ դրա շարունակության մոտակա կետի բարձրությանը: Հարթության թեքությունը հաշվարկվում է վազքուղու առանցքագծով անցնող ուղղահայաց հարթության նկատմամբ: Ներքին հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ստորին սահմանը, որը սկսվում է վայրէջքի ներքին հարթության եզրից և տարածվում է դրա երկայնքով՝ զուգահեռ վազքուղու առանցքագծին մինչև ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու (այսուհետ՝ երկրորդ շրջան) հարթության ներքին սահմանը և դեպի վեր տվյալ հարթության եզրային սահմանի ուղղությամբ մինչև ներքին հորիզոնական հարթության եզրային սահմանը,

բ. վերին սահմանը, որը գտնվում է ներքին հորիզոնական հարթության վրա:

7) Ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու հարթություն – իրենից ներկայացնում է թեք հարթություն, որը գտնվում է ներքին անցումային հարթությունների միջև վազքուղու շեմից սահմանված հեռավորության վրա: Ընդհատված վայրէջքի

ժամանակ երկրորդ շրջան անցնելու հարթության ներքին սահմանի հարաբերական բարձրությունը համապատասխանում է վազբուղու առանցքագծի բարձրությանը ներքին սահմանի գոտում: Հարթության թեքությունը հաշվարկվում է վազբուղու առանցքագծով անցնող ուղղաձիգ հարթության նկատմամբ:

Հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը - վազբուղու շեմերից համապատասխան հեռավորության վրա գտնվող և առանցքագծին ուղղահայաց հորիզոնականը,

բ. եզրային սահմանները - սկսվում են ներքին սահմանի եզրերից և հավասարաչափ շեղված վազբուղու առանցքագծով անցնող հարթության նկատմամբ տարածվում են մինչև արտաքին սահմանը,

գ. արտաքին սահմանը - ներքին հորիզոնական հարթությունում տեղակայված և ներքին սահմանին զուգահեռ սահման:

8) Բարձրություն հավաքելու - վազբուղու շեմերի կամ խոչընդոտներից ազատ գոտու սահմաններից դուրս թեք կամ նշված ձևի հարթություն: Բարձրություն հավաքելու ներքին սահմանի բարձրությունը համապատասխանում է վազբուղու շեմի և ներքին սահմանի միջև ընկած հատվածում վազբուղու առանցքագծի շարունակության առավելագույն բարձրության վրա գտնվող կետի բարձրությանը, սակայն խոչընդոտներից ազատ գոտու առկայության դեպքում ներքին սահմանի բարձրությունը համապատասխանում է խոչընդոտներից ազատ գոտու առանցքագծի վրա գտնվող հողատարածքի առավելագույն բարձր կետի բարձրությանը: Եթե բարձրություն հավաքելու հետագիծն ուղղագիծ է, բարձրություն հավաքելու մակերևույթի թեքությունը սահմանվում է վազբուղու առանցքագծով անցնող ուղղաձիգ հարթության նկատմամբ: Եթե բարձրություն հավաքելու հետագիծը շրջադարձով է և ունի բարդ գծանկար, առանցքագծի թեքությունը համանման է ուղղաձիգ հետաձիգ թեքությանը: Բարձրություն հավաքելու սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը՝ վազբուղու առանցքագծին ուղղահայաց հորիզոնական է, որը կարող է տեղակայված լինել կամ վազբուղու շեմից սահմանված հեռավորության վրա, կամ խոչընդոտներից ազատ գոտու առկայության դեպքում դրա վերջնասահմաններում,

բ. եզրային սահմանները, որոնք սկսվում են ներքին սահմանի եզրերից և սահմանված անկյան տակ հավասարաչափ շեղված են թռիչքագծի նկատմամբ մինչև սահմանված լայնությունը, որից սկսած շարունակվում են բարձրություն հավաքելու հարթության երկարության մնացած ամբողջ հատվածի չափով,

գ. արտաքին սահմանը՝ թռիչքագծին ուղղահայաց հորիզոնական է սահմանված հեռավորության վրա:

9) Աերողորմի շրջակայքի օդային տարածքի հարթությունների գծանկարները և բնութագրերը ներկայացված են Ուղեցույցի 1 և 2 նկարներում և 1 և 2 աղյուսակներում:


Հարթությունը և չափսերը	Աերողորմի դասակարգումը									
								Սարքավորված վազբուղի օդանավերի ճշգրիտ վայրէջքի համար		
	Չսարքավորված վազբուղի				Սարքավորված վազբուղի օդանավերի ոչ ճշգրիտ վայրէջքի համար			I-ին կարգախմբի		II-րդ և III-րդ կարգախմբի
	Վազբուղու ծածկագրի նիշը				Վազբուղու ծածկագրի նիշը			Վազբուղու ծածկագրի նիշը		Վազբուղու ծածկագրի նիշը
	1	2	3	4	1.2	3	4	1.2	3.4	3.4
Կոնային										
Թեքությունը	5%	5%	5%	5%	5%	5%	5%	5%	5%	5%
Բարձրությունը	35մ	55մ	75մ	100մ	60մ	75մ	100մ	60մ	100մ	100մ
Ներքին հորիզոնական										
Բարձրությունը	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ
Շառավիղը	2000մ	2500մ	4000մ	4000մ	3500մ	4000մ	4000մ	3500մ	4000մ	4000մ
Վայրէջքի ներքին										
Լայնությունը	-	-	-	-	-	-	-	90մ	120մ	120մ
Հեռավորությունը շեմից	-	-	-	-	-	-	-	60մ	60մ	60մ
Երկարությունը	-	-	-	-	-	-	-	900մ	900մ	900մ
Թեքությունը	-	-	-	-	-	-	-	2.5%	2%	2%
Վայրէջքի										
Ներք.սահմ.երկար.	60մ	80մ	150մ	150մ	150մ	300մ	300մ	150մ	300մ	300մ
Հեռավորությունը շեմից	30մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ
Շեղվածություն (յուրաքանչյուր ուղղությամբ)	10%	10%	10%	10%	15%	15%	15%	15%	15%	15%
Առաջին հատված										
Երկարությունը	1600	2500մ	3000մ	3000մ	2500մ	3000մ	3000մ	3000մ	3000մ	3000մ
Թեքությունը	5%	4%	3.33%	2.5%	3.33%	2%	2%	2.5%	2%	2%
Երկրորդ հատված										
Երկարությունը	-	-	-	-	-	3600մ	3600մ	12000	3600	3600
Թեքությունը	-	-	-	-	-	2.5%	2.5%	3%	2.5%	2.5%
Հորիզոնական հատված										
Երկարությունը	-	-	-	-	-	8400մ	8400մ	-	8400մ	8400մ
Թեքությունը	-	-	-	-	-	15000մ	15000մ	15000մ	15000մ	15000մ
Անցումային										
Թեքությունը	20%	20%	14.3%	14.3%	20%	14.3%	14.3%	14.3%	14.3%	14.3%
Ներքին անցումային										
Թեքությունը	-	-	-	-	-	-	-	40%	3.33%	3.33%
Ընդհատված վայրէջքի										
Ներք.սահմ.երկար.	-	-	-	-	-	-	-	90մ	120մ	120մ
Հեռավորությունը շեմից	-	-	-	-	-	-	-	-	1800մ	1800մ
Շեղվածություն (յուրաքանչյուր ուղղությամբ)	-	-	-	-	-	-	-	10%	10%	10%
Թեքությունը	-	-	-	-	-	-	-	4%	3.33%	3.33%

Վերելքի համար նախատեսված վազբուղի

Աղյուսակ 2


Վազբուղու ծածկագրի համարը			
Հարթությունը և չափսերը	1	2	3 կամ 4
Ներքին սահմանագիծի երկարությունը	60մ	80մ	180մ
Հեռավորություն վազբուղու շեմից	30մ	60մ	60մ
Շեղվածություն (յուրաքանչյուր ուղղությամբ)	10%	10%	12.5%
Վերջնահատվածի լայնությունը	380մ	580մ	1200մ
Երկարությունը	1600մ	2500մ	15000մ
Թեքությունը	5%	4%	2%

Աերոդրոմի շրջակայքի օդային տարածքն ըստ հարթությունների



Նկար N1

Աերոդրոմի շրջակայքի օդային տարածքն ըստ հարթությունների



Նկար N2

10) Աերոդրոմի շրջակայքի օդային տարածքի հարթություններին ներկայացվող պահանջները պայմանավորված են աերոդրոմի ծածկագրային ցուցանիշով և վազբուղու նավիգացիոն միջոցների հագեցվածությամբ:

11) Չսարքավորված վազբուղիների համար սահմանվում են խոչընդոտների սահմանափակման հետևյալ մակերևույթները՝

ա. կոնային,

բ. ներքին հորիզոնական,

գ. վայրէջքի,

դ. անցումային:

12) Օդանավերի ոչ ճշգրիտ վայրէջքի համար սարքավորված վազբուղիների համար սահմանվում են խոչընդոտների սահմանափակման հետևյալ մակերևույթները՝

ա. կոնային,

բ. ներքին հորիզոնական,

գ. վայրէջքի,

դ. անցումային:

13) Օդանավերի ճշգրիտ վայրէջքի համար I-ին, II-րդ և III-րդ կարգախմբի վազբուղիների համար սահմանվում են խոչընդոտների սահմանափակման հետևյալ մակերևույթները՝

ա. կոնային,

բ. ներքին հորիզոնական,

գ. վայրէջքի,

դ. վայրէջքի ներքին,

ե. անցումային,

զ. ներքին անցումային,

է. ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու:

4. Աերոդրոմի շրջակայքում նոր կառուցվող օդային խոչընդոտների թույլտվությունը տրվում է Կոմիտեի կողմից. համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի 2003 թվականի հուլիսիս 3-ի N825-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ օդային տարածքի կազմակերպման կարգի>> (այսուհետ՝ Կարգ):

5. Ըստ Ուղեցույցի 3-րդ կետում նշված հարթությունների և համաձայն Կարգի 36-րդ կետի աերոդրոմի շրջակայքը դասակարգվում է հետևյալ գոտիների՝

1) I գոտի՝ վազբուղու շենքի միջնակետերից 4 կիլոմետր շառավղով աղեղների՝ վազբուղուց դուրս աղեղների և դրանց ընդհանուր շրջափողների միջև ընկած գոտի, որտեղ կառուցվող խոչընդոտը՝ աերոդրոմի տեղորոշիչ կետի բարձրության նկատմամբ չպետք է գերազանցի 45 մետրը:

2) II գոտի՝ վազբուղու շենքի միջնակետերից 5.1 կիլոմետր շառավղով աղեղների՝ վազբուղուց դուրս աղեղների և դրանց ընդհանուր շրջափողների միջև ընկած գոտի, որտեղ կառուցվող խոչընդոտը՝ աերոդրոմի տեղորոշիչ կետի բարձրության նկատմամբ, չպետք է գերազանցի 100 մետրը:

3) III գոտի՝ աերոդրոմի տեղորոշիչ կետից 15 կիլոմետր շառավղով գոտի, որտեղ կառուցվող խոչընդոտը չպետք է գերազանցի 150 մետրը՝ աերոդրոմի տեղորոշիչ կետի բարձրության նկատմամբ, և 30 մետրը՝ տվյալ տեղանքի նկատմամբ:

4) IV գոտի՝ վազբուղու շենքից հորիզոնական հարթության նկատմամբ 2 տոկոս թեքությամբ երկրաչափական սեղանի տեսքով հարթության՝ համապատասխանաբար 300, 4900 և 15000 մետր հիմքերով և բարձրությամբ (300 մետր լայնությամբ հիմքը համընկնում է վազբուղու շենքի հետ), հորիզոնական պրոյեկցիայում ընկած գոտի, որտեղ կառուցվող խոչընդոտը չպետք է հասի նշված հարթությունը:

6. Ուղեցույցի 5-րդ կետով սահմանված գոտիներում նոր կառուցվող խոչընդոտների նախագծերը ենթակա են համաձայնեցման Կոմիտեի հետ:

7. Նոր խոչընդոտ կառուցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը Կոմիտե է ներկայացնում հայտ, որում նշվում են՝

1) խոչընդոտի նշանակությունը և հիմնական բնութագրերը (բացառձակ և հարաբերական բարձրությունները):

2) Խոչընդոտի տեղադրման վայրը (աշխարհագրական դիրք WGS-84 համակարգով, գետնի մակերևույթի բացարձակ სიշեր, ռելիեֆային քարտեզ):

3) Խոչընդոտի կառուցման ընթացքում օգտագործվող շինարարական տեխնիկան:

4) Կապի և էլեկտրահաղորդման գծերի համար աշտարակային հենարանների բարձրությունները, իսկ ռադիոընդունիչ-հաղորդիչ կայմերի տեղադրման դեպքում նաև ռադիոհաճախականությունները:

5) Շինարարության սկզբի և ավարտի ժամկետները:

8. Հայտը ստանալուց Կոմիտեն երկօրյա ժամկետում ուսումնասիրում է հայտի ամբողջականությունը և ներկայացված տվյալների համապատասխանությունը Կարգի 38-րդ և Ուղեցույցի 7-րդ կետերին:

9. Հայտը թերի ներկայացնելու դեպքում այն մերժվում է և վերադարձվում է հայտատուին. նշելով անհամապատասխանությունները և մերժման հիմքերը:

10. Հայտի համապատասխանության դեպքում Կոմիտեի կողմից համակարգչային համապատասխան ծրագրային կամ մաթեմատիկական հաշվարկների միջոցով ուսումնասիրվում է խոչընդոտի գերազանցումներն Ուղեցույցի 5-րդ կետով սահմանված բարձրությունների նկատմամբ և գնահատվում է խոչընդոտի հնարավոր ազդեցությունը թռիչքների անվտանգության վրա:

11. Ուսումնասիրությունների ընթացքում՝

1) Ըստ աշխարհագրական կոորդինատների որոշվում է խոչընդոտի դիրքն աերոդրոմի տեղորոշիչ կետի նկատմամբ և գոտին, որի սահմաններում գտնվում է խոչընդոտը: Խոչընդոտի հեռավորությունն աերոդրոմի տեղորոշիչ կետի նկատմամբ որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S = \sqrt{(X_{\text{խ}} - X_{\text{ՏՈԿ}})^2 + (Y_{\text{խ}} - Y_{\text{ՏՈԿ}})^2}, \text{ որտեղ՝}$$

$X_{\text{խ}}, Y_{\text{խ}}$ - խոչընդոտի բեվեռային կոորդինատներն են,

$X_{\text{ՏՈԿ}}, Y_{\text{ՏՈԿ}}$ - աերոդրոմի տեղորոշիչ կետի բեվեռային կոորդինատներն են:

2) Հաշվարկվում է խոչընդոտի հարաբերական բարձրությունը աերոդրոմի տեղորոշիչ կետի նկատմամբ:

3) Ըստ խոչընդոտի տեղակայման գոտու և Ուղեցույցի 5-րդ կետով սահմանված բարձրությունների որոշվում է խոչընդոտի համապատասխանությունը կամ գերազանցումը:

4) Եթե խոչընդոտը գտնվում է Ուղեցույցի 5-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված IV գոտում՝

ա/ Ուղեցույցի թիվ 1 կամ թիվ 2 Աղյուսակներում ներկայացված թերությունների և հեռավորությունների համաձայն հաշվարկվում է համապատասխան հարթությունը.

բ/ հաշվարկված հարթության հորիզոնական պրոյեկցիայի վրա ըստ աշխարհագրական կոորդինատների տեղադրվում է խոչընդոտը.

գ/ հաշվարկվում են խոչընդոտի և հարթության տվյալ հատվածի բարձրությունները.

դ/ ըստ հաշվարկված բարձրությունների որոշվում է խոչընդոտի համապատասխանությունը կամ գերազանցումը:

12. Ուսումնասիրությունների շրջանակներում կարող են դիտարկվել տվյալ գոտում արդեն իսկ առկա խոչընդոտները. հաշվի առնելով սովերարկման սկզբունքը:

1) Ստվերարկում է համարվում, եթե խոչընդոտը գտնվում է այլ խոչընդոտի ստվերի սահմաններում:

2) Ստվերարկող հարթությունն անցնում է խոչընդոտի վերին կետից և ունի 15% նվազող թեքություն:

3) Դիտարկվող կետի ստվերարկվող հարթության հեռավորությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$L = \sqrt{(X_{\text{խ}} - X)^2 + (Y_{\text{խ}} - Y)^2}, \text{ որտեղ՝}$$

$X_{\text{խ}}, Y_{\text{խ}}$ - խոչընդոտի բեվեռային կոորդինատներն են,

X, Y – դիտարկվող կետի բեվեռային կոորդինատներն են:

13. Ուղեցույցի 11-րդ կետի 3-րդ ենթակետի և 4-րդ ենթակետի ո/ պարբերության հիման վրա մշակվում է եզրակացություն խոչընդոտի կառուցման վերաբերյալ:

14. Թույլտվություն ստացած նոր կառուցվող խոչընդոտի վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ խոչընդոտի նշանակությունը, աշխարհագրական դիրքը (կոորդինատները՝ WGS-84 համակարգով), բացարձակ և հարաբերական բարձրությունները, ինչպես նաև խոչընդոտի մականշումների, կառուցման ժամկետների և կառուցման ընթացքում օգտագործվող շինարարական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը Կոմիտեն ներկայացնում է աերոդրոմ շահագործողին. վերահսկողություն իրականանցելու և հաշվառված խոչընդոտների ցանկում ներառելու նպատակով:

15. Աերոդրոմում և կից շրջակայքում խոչընդոտների վերահսկողությունն իրականացվում է աերոդրոմ շահագործողի կողմից. համաձայն Գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 23-ի N64-Ն հրամանով հաստատված «ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմանների» 5-րդ Գլխի:

16. Աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմում և կից շրջակայքում խոչընդոտների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների վերահսկողության ուղեցույցի» համաձայն:

17. Կոմիտեն սահմանում է վերահսկողությունն աերոդրոմ շահագործողի կողմից Ուղեցույցի 14-րդ կետում նշված գործառույթների ապահովման նկատմամբ:

1) Սույն կետում նշված վերահսկողությունն իրականացվում է Գլխավոր վարչության պետի 2015 թվականի մայիսի 19-ի N112-Ա հրամանով սահմանված աերոդրոմի տարեկան և սեզոնային աուդիտների շրջանակներում:

18. Սույն Ուղեցույցի 16-րդ կետում նշված ուղեցույցի 9-րդ կետով սահմանված տեղեկատվության առկայության դեպքում Կոմիտեն անցկացնում է աերոնավիգացիոն հետազոտություններ:

1) Եթե սույն կետում նշված հետազոտությունների արդյունքում արձանագրվում է, որ խոչընդոտը չի սպառնում թռիչքների անվտանգությունը. Կոմիտեի եզրակացությունը ներկայացվում է Աերոդրոմ շահագործողին:

2) Եթե սույն կետում նշված հետազոտությունների արդյունքում արձանագրվում է, որ խոչընդոտը սպառնում է թռիչքների անվտանգությունը Կոմիտեն ձեռնարկում է միջոցառումներ՝ ուղղված թռիչքների անվտանգության ապահովմանը:

19. Ավիացիոն հետազոտություններն իրականացվում են Ուղեցույցի 10-րդ և 11-րդ կետերի դրույթների և աերոդրոմի թռիչք/վայրեջքների սխեմաների համաձայն:

2019 թվականի փետրվարի 1-ի

թիվ 32-Ա հրամանի

ԱԵՐՈՂՐՈՄ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱԵՐՈՂՐՈՄԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՕԴԱՅԻՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմի շրջակայքում օդային խոչընդոտների վերահսկողության ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի N 825-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության օդային երթևեկության կազմակերպման միասնական համակարգի գործունեության և օդային տարածքի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ), Չիկագոյի Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) N 14 և N 15 Հավելվածների, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) N 9137 ձեռնարկի Մաս 6-ի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետի 2007 թվականի ապրիլի 23-ի N 64-Ն հրամանով հաստատված «ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմաններով» (այսուհետ՝ Շահագործման պայմաններ) սահմանված պահանջների համաձայն և սահմանում է աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմում և կից շրջակայքում օդային խոչընդոտների վերահսկողության գործընթացը:

2. Սույն ուղեցույցի իմաստով՝

1) Աերոդրոմ շահագործող է համարվում օդանավակայանի սեփականատերը կամ այն իրավաբանական անձը, որն իրականացնում է օդանավակայանի շահագործումը կամ կոնցեսիոն կառավարումը:

2) Աերոդրոմի շրջակայք է համարվում օդային տարածքի այն մասը, որը գտնվում է աերոդրոմի ու դրան կից տեղանքի վրա և նախատեսված է աերոդրոմում թռիչք-վայրէջքներ կատարելու համար ու օդային մայրուղիներ մուտք (ելք) գործելու համար, ինչպես նաև այն հողային տեղամասը, որն ընկած է աերոդրոմի տեղորոշիչ կետից 15 կմ շառավիղի սահմաններում:

3) Աերոդրոմի տեղորոշիչ կետ է համարվում վազքուղու կենտրոնում կամ ծայրում գտնվող կետը, որը որոշում է աերոդրոմի աշխարհագրական դիրքը:

4) Օդային խոչընդոտներ են համարվում բոլոր ժամանակավոր կամ մշտական անշարժ (արհեստական կամ բնական) օբյեկտները կամ դրանց մասերը, որոնք գտնվում են օդանավերի գետնավարման գոտիներում կամ գերազանցում են թռիչքների համար սահմանված հարթությունների մակերևույթները:

3. Ըստ թռիչքների համար նախատեսված ազատ գոտիների աերոդրոմի շրջակայքը բաժանվում է հետևյալ հարթությունների՝

1) Կոնային - թեք հարթություն է, որի ստորին սահմանը համընկնում է ներքին հորիզոնական հարթության մակերևույթի վերին սահմանի հետ և հանդիսանում է վերջինիս շարունակությունը:

2) Ներքին հորիզոնական - ներքին հորիզոնական հարթությունը հորիզոնական շրջան է, որը գտնվում է աերոդրոմի և մերձաերոդրոմային օդային տարածքում: Շրջանի շառավիղը և բարձրությունը սահմանվում են աերոդրոմի տեղորոշիչ կետի նկատմամբ:

3) Վայրէջքի - հարթությունն իրենից ներկայացնում է երկրաչափական սեղանի ձևով հարթություն, որը գտնվում է վազքուղու շեմերի շարունակության վրա: Վայրէջքի կորագծային սխեմաների կամ դրանց շեղվածության դեպքերում հնարավոր է վայրէջքի հարթության ձևի փոփոխում: Վայրէջքի հարթության ներքին սահմանի հարաբերական բարձրությունը հավասար է վազքուղու տվյալ շեմի հարաբերական միջին բարձրությանը, իսկ թեքությունները սահմանվում են վայրէջքի առանցքագծով անցնող ուղղահայաց մակերեսի նկատմամբ: Վայրէջքի հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը - սեղանի հիմքերից մեկը, որը ուղղահայց է վազքուղու առանցքագծի շարունակությանը և գտնվում է վազքուղու շեմերից սահմանված հեռավորության վրա,

բ. եզրային սահմանները - սեղանի կողմերը, որոնք սկսվում են վայրէջքի ներքին մակերևույթի սահմանից և հավասարաչափ շեղված են վազքուղու առանցքագծի նկատմամբ,

գ. արտաքին սահմանը - սեղանի երկրորդ հիմքը:

4) Վայրէջքի ներքին - հարթությունն իրենից ներկայացնում է ուղղանկյուն, որը գտնվում է անմիջապես վազքուղու շեմի առջև: Վայրէջքի ներքին հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը - սահմանված երկարությամբ վազքուղու առանցքագծին ուղղահայաց, որը համընկնում է վայրէջքի հարթության ներքին սահմանի հետ,

բ. եզրային սահմանները - սահմանված երկարությամբ վազքուղու առանցքագծին զուգահեռներ, որոնք սկսվում են հարթության ներքին սահմանից,

գ. արտաքին սահմանը - հարթության ներքին սահմանին զուգահեռ:

5) Անցումային - իրենից ներկայացնում է բարդ հարթություն, որը տեղաբաշխված է վազքուղու թռիչքային գոտու և վայրէջքի հարթության երկայնքով և թեքությամբ տարածվում է վեր՝ մինչև ներքին հորիզոնական հարթությունը: Անցումային հարթության հարաբերական բարձրությունը վայրէջքի հարթության երկանքով համապատասխանում է վերջինիս բարձրությանը, իսկ թռիչքային գոտու երկանքով՝ վազքուղու առանցքագծի մոտակա կետի բարձրությանը: Հարթության երկայնքով թեքությունը հաշվարկվում է վազքուղու առանցքագծով անցնող ուղղաձիգ հարթության նկատմամբ, իսկ ճակատային հատվածների թեքությունը՝ վազքուղու առանցքագծին ուղղահայաց: Անցումային հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը, որը սկսվում է վայրէջքի և ներքին հորիզոնական հարթությունների հատման եզրային սահմանից և տարածվում է ներքև վայրէջքի հարթության եզրի երկայնքով մինչև վայրէջքի հարթության ներքին սահմանը՝ վազքուղու առանցքագծին զուգահեռ:

բ. վերին սահմանը, որը համընկնում է ներքին հարթության մակերեսի սահմանի հետ:

6) Ներքին անցումային - վազքուղուն ավելի մոտ գտնվող անցումային հարթությանը համանման հարթություն: Ներքին անցումային հարթության ստորին սահմանի հարաբերական բարձրությունը, վայրէջքի և երկրորդ շրջանի հարթությունների երկայնքով, համապատասխանում է կոնկրետ հարթության բարձրությանը, իսկ թռիչքագոտու երկայնքով՝ վազքուղու առանցքագծի կամ դրա շարունակության մոտակա կետի բարձրությանը: Հարթության թեքությունը հաշվարկվում է վազքուղու առանցքագծով անցնող ուղղաձիգ հարթության նկատմամբ: Ներքին հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ստորին սահմանը, որը սկսվում է վայրէջքի ներքին հարթության եզրից և տարածվում է դրա երկայնքով՝ զուգահեռ վազքուղու առանցքագծին մինչև ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու (այսուհետ՝ երկրորդ շրջան) հարթության ներքինը

սահմանը և դեպի վեր տվյալ հարթության եզրային սահմանի ուղղությամբ մինչև ներքին հորիզոնական հարթության եզրային սահմանը,

բ. վերին սահմանը, որը գտնվում է ներքին հորիզոնական հարթության վրա:

7) Ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու հարթություն – իրենից ներկայացնում է թեք հարթություն, որը գտնվում ներքին անցումային հարթությունների միջև վազքուղու շեմից սահմանաված հեռավորության վրա: Ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու հարթության ներքին սահմանի հարաբերական բարձրությունը համապատասխանում է վազքուղու առանցքագծի բարձրությանը ներքին սահմանի գոտում: Հարթության թեքությունը հաշվարկվում է վազքուղու առանցքագծով անցնող ուղղաձիգ հարթության նկատմամբ:

Հարթության սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը - վազքուղու շեմերից համապատասխան հեռավորության վրա գտնվող և առանցքագծին ուղղահայաց հորիզոնականը,

բ. եզրային սահմանները - սկսվում են ներքին սահմանի եզրերից և հավասարաչափ շեղված վազքուղու առանցքագծով անցնող հարթության նկատմամբ տարածվում են մինչև արտաքին սահմանը,

գ. արտաքին սահմանը - ներքին հորիզոնական հարթությունում տեղակայված և ներքին սահմանին զուգահեռ սահման:

8) Բարձրություն հավաքելու - վազքուղու շեմերի կամ խոչընդոտներից ազատ գոտու սահմաններից դուրս թեք կամ նշված ձևի հարթություն: Բարձրություն հավաքելու ներքին սահմանի բարձրությունը համապատասխանում է վազքուղու շեմի և ներքին սահմանի միջև ընկած հատվածում վազքուղու առանցքագծի շարունակության առավելագույն բարձրության վրա գտնվող կետի բարձրությանը, սակայն խոչընդոտներից ազատ գոտու առկայության դեպքում ներքին սահմանի բարձրությունը համապատասխանում է խոչընդոտներից ազատ գոտու առանցքագծի վրա գտնվող հողատարածքի առավելագույն բարձր կետի բարձրությանը: Եթե բարձրություն հավաքելու հետագիծն ուղղագիծ է, բարձրություն հավաքելու մակերևույթի թեքությունը սահմանվում է վազքուղու առանցքագծով անցնող ուղղաձիգ հարթության նկատմամբ: Եթե բարձրություն հավաքելու հետագիծը շրջադարձով է և ունի բարդ գծանկար, առանցքագծի թեքությունը համանման է ուղղագիծ հետագծի թեքությանը: Բարձրություն հավաքելու սահմաններ են հանդիսանում՝

ա. ներքին սահմանը՝ վազքուղու առանցքագծին ուղղահայաց հորիզոնական է, որը կարող է տեղակայված լինել կամ վազքուղու շեմից սահմանված հեռավորության վրա, կամ խոչընդոտներից ազատ գոտու առկայության դեպքում դրա վերջնասահմաններում,

բ. եզրային սահմանները, որոնք սկսվում են ներքին սահմանի եզրերից և սահմանված անկյան տակ հավասարաչափ շեղված են թռիչքագծի նկատմամբ մինչև սահմանված լայնությունը, որից սկսած շարունակվում են բարձրություն հավաքելու հարթության երկարության մնացած ամբողջ հատվածի չափով,

գ. արտաքին սահմանը՝ թռիչքագծին ուղղահայաց հորիզոնական է սահմանված հեռավորության վրա:

9) Աերողորմի շրջակայքի օդային տարածքի հարթությունների գծանկարները և բնութագրերը ներկայացված են Ուղեցույցի 1 և 2 նկարներում և 1 և 2 աղյուսակներում:


Հարթությունը և չափսերը	Աերոորոմի դասակարգումը									
								Սարքավորված վազբուղի օդանավերի ճշգրիտ վայրէջքի համար		
	Չսարքավորված վազբուղի				Սարքավորված վազբուղի օդանավերի ոչ ճշգրիտ վայրէջքի համար			I-ին կարգախմբի		II-րդ և III-րդ կարգախմբի
	Վազբուղու ծածկագրի նիշը				Վազբուղու ծածկագրի նիշը			Վազբուղու ծածկագրի նիշը		Վազբուղու ծածկագրի նիշը
	1	2	3	4	1.2	3	4	1.2	3.4	3.4
Կոնային										
Թեքությունը	5%	5%	5%	5%	5%	5%	5%	5%	5%	5%
Բարձրությունը	35մ	55մ	75մ	100մ	60մ	75մ	100մ	60մ	100մ	100մ
Ներքին հորիզոնական										
Բարձրությունը	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ	45մ
Շառավիղը	2000մ	2500մ	4000մ	4000մ	3500մ	4000մ	4000մ	3500մ	4000մ	4000մ
Վայրէջքի ներքին										
Լայնությունը	-	-	-	-	-	-	-	90մ	120մ	120մ
Հեռավորությունը շեմից	-	-	-	-	-	-	-	60մ	60մ	60մ
Երկարությունը	-	-	-	-	-	-	-	900մ	900մ	900մ
Թեքությունը	-	-	-	-	-	-	-	2.5%	2%	2%
Վայրէջքի										
Ներք.սահմ. երկար.	60մ	80մ	150մ	150մ	140մ	280մ	280մ	140մ	280մ	280մ
Հեռավորությունը շեմից	30մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ	60մ
Շեղվածություն (յուրաքանչյուր ուղղությամբ)	10%	10%	10%	10%	15%	15%	15%	15%	15%	15%
Առաջին հատված										
Երկարությունը	1600	2500մ	3000մ	3000մ	2500մ	3000մ	3000մ	3000մ	3000մ	3000մ
Թեքությունը	5%	4%	3.33%	2.5%	3.33%	2%	2%	2.5%	2%	2%
Երկրորդ հատված										
Երկարությունը	-	-	-	-	-	3600մ	3600մ	12000	3600	3600
Թեքությունը	-	-	-	-	-	2.5%	2.5%	3%	2.5%	2.5%
Հորիզոնական հատված										
Երկարությունը	-	-	-	-	-	8400մ	8400մ	-	8400մ	8400մ
Թեքությունը	-	-	-	-	-	15000մ	15000մ	15000մ	15000մ	15000մ
Անցումային										
Թեքությունը	20%	20%	14.3%	14.3%	20%	14.3%	14.3%	14.3%	14.3%	14.3%
Ներքին անցումային										
Թեքությունը	-	-	-	-	-	-	-	40%	3.33%	3.33%
Ընդհատված վայրէջքի										
Ներք.սահմ. երկար.	-	-	-	-	-	-	-	90մ	120մ	120մ
Հեռավորությունը շեմից	-	-	-	-	-	-	-	-	1800մ	1800մ
Շեղվածություն (յուրաքանչյուր ուղղությամբ)	-	-	-	-	-	-	-	10%	10%	10%
Թեքությունը	-	-	-	-	-	-	-	4%	3.33%	3.33%

Վերելքի համար նախատեսված վազբուղի

Աղյուսակ 2


Վազբուղու ծածկագրի համարը			
Հարթությունը և չափսերը	1	2	3 կամ 4
Ներքին սահմանագիծի երկարությունը	60մ	80մ	180մ
Հեռավորություն վազբուղու շեմից	30մ	60մ	60մ
Շեղվածությունը (յուրաքանչյուր ուղղությամբ)	10%	10%	12.5%
Վերջնահատվածի լայնությունը	380մ	580մ	1200մ
Երկարությունը	1600մ	2500մ	15000մ
Թեքությունը	5%	4%	2%

Աերոդրոմի շրջակայքի օդային տարածքն ըստ հարթությունների



Նկար N1

Աերոդրոմի շրջակայքի օդային տարածքն ըստ հարթությունների



Նկար N2

10) Աերոդրոմի շրջակայքի օդային տարածքի հարթություններին ներկայացվող պահանջները պայմանավորված են աերոդրոմի ծածկագրային ցուցանիշով և վազքուղու նավիգացիոն միջոցների հագեցվածությամբ:

11) Չսարքավորված վազքուղիների համար սահմանվում են խոչընդոտների սահմանափակման հետևյալ մակերևույթները՝

ա. կոնային,

բ. ներքին հորիզոնական,

գ. վայրէջքի,

դ. անցումային:

12) Օդանավերի ոչ ճշգրիտ վայրէջքի համար սարքավորված վազքուղիների համար սահմանվում են խոչընդոտների սահմանափակման հետևյալ մակերևույթները՝

ա. կոնային,

բ. ներքին հորիզոնական,

գ. վայրէջքի,

դ. անցումային:

13) Օդանավերի ճշգրիտ վայրէջքի համար I-ին, II-րդ և III-րդ կարգախմբի վազքուղիների համար սահմանվում են խոչընդոտների սահմանափակման հետևյալ մակերևույթները՝

ա. կոնային,

բ. ներքին հորիզոնական,

գ. վայրէջքի,

դ. վայրէջքի ներքին,

ե. անցումային,

զ. ներքին անցումային,

է. ընդհատված վայրէջքի ժամանակ երկրորդ շրջան անցնելու:

4. Աերոդրոմ շահագործողն ապահովում է Կոնվենցիայի N15 Հավելվածի 10-րդ գլխով սահմանված աերոդրոմի 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտիների տեղանքի և օդային խոչընդոտների չափագրումը, հաշվառումը և էլեկտրոնային բազայի ստեղծումը, ինչպես նաև դրանց հրապարակումը ՀՀ Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ:

1) Աերոդրոմի 2-րդ գոտին բաժանվում է 4 գոտիների հետևյալ տվյալներով՝

ա. 2a գոտի, որն իրենից ներկայացնում է վազքուղուն կից ուղղանկյուն ներառյալ թռիչքագոտին և խոչընդոտներից ազատ գոտիները: Խոչընդոտների հաշվառման համար 2a գոտու մակերևույթի բարձրությունը սահմանվում է 3 մետր վազքուղու մոտակա գերազանցման նկատմամբ, իսկ խոչընդոտներից ազատ գոտու համար վազքուղու մոտակա շեմի գերազանցման նկատմամբ:

բ. 2b գոտի, որը հանդիսանում է թռիչքների ուղղությամբ 2a գոտու շարունակություն 10 կմ երկարությամբ և յուրաքանչյուր կողմից վրա 15% շեղվածությամբ: 2b գոտու թեքությունը սահմանվում է 1.2%: Տվյալ գոտում գետնի մակերևույթի նկատմամբ 3 մետր բարձրություն ունեցող խոչընդոտները չեն հաշվառվում:

գ. 2c գոտի, որը հանդիսանում է 2a և 2b գոտիների շարունակություն, 2a գոտու սահմաններից 10 կմ երկարությամբ: 2c գոտու թեքությունը սահմանվում է 1.2%: Տվյալ գոտում գետնի մակերևույթի նկատմամբ 15 մետր բարձրություն ունեցող խոչընդոտները չեն հաշվառվում:

դ. 2d գոտի, որը հանդիսանում է 2a, 2b և 2c գոտիների շարունակություն և որի երկարությունը կազմում է 45 կմ աերոդրոմի տեղորոշիչ կետից կամ մինչև աերոդրոմային մանևրման օդային գոտու համապատասխան սահմանը՝ կապված դրանց մոտիկությունից (մինչև մոտական): Տվյալ գոտու բարձրությունը գետնի մակերևույթի նկատմամբ կազմում է 100 մետր:

2) Աերոդրոմի 3-րդ գոտին աերոդրոմի բանող հրապարակին կից տարածք է, որի լայնությունը վազքուղու հարող հատվածներում կազմում է 90 մետր վազքուղու առանցքագծի նկատմամբ, իսկ բանող հրապարակի մնացած հատվածներում (ղեկուղիներ, կառամատույց, կայանատեղ) 50 մետր տվյալ տարրի եզրային սահմանների նկատմամբ:

3) Աերոդրոմի 4-րդ գոտին վայրէջքի ուղղությամբ աերոդրոմի վազքուղու շեմին կից գոտի է, որի երկարությունը կազմում է 900 մետր վազքուղու շեմի նկատմամբ, իսկ լայնությունը՝ 60 մ վազքուղու առանցքագծից երկու կողմերի նկատմամբ:

4) Աերոդրոմի 4-րդ գոտու համար սույն կետի պահանջները սահմանվում են ԻԿԱՕ-ի ճշգրիտ վայրէջքի II կամ III կարգախմբի վազքուղիների համար:

5. Օդային խոչընդոտների չափագրման ճշտությունը և ամբողջականությունը պետք է համապատասխանեն Կոնվենցիայի N14 և N15 Հավելվածներով սահմանված պահանջներին:

6. Աերոդրոմի շրջակայքում նոր կառուցվող օդային խոչընդոտների թույլտվությունը տրվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից. համաձայն Կարգի 5-րդ գլխի:

1) Թույլտվություն ստացած նոր կառուցվող խոչընդոտի վերաբերյալ տեղեկատվությունը Կոմիտեն ներկայացնում է Աերոդրոմ շահագործողին՝ Ուղեցույցի 4-րդ կետում նշված բազայի մեջ ներառելու նպատակով: Աերոդրոմ շահագործողին ներկայացվում են հետևյալ տվյալները՝

ա. Խոչընդոտի նշանակությունը:

բ. Խոչընդոտի աշխարհագրական կոորդինատները՝ WGS-84 համակարգով:

գ. Խոչընդոտի բացարձակ և հարաբերական բարձրությունները:

2) Աերոդրոմի տարածքում նոր կառուցվող խոչընդոտի թույլտվությունը տրվում է Աերոդրոմ շահագործողի եզրակացության առկայության դեպքում:

3) Աերոդրոմի տարածքում նոր կառուցվող խոչընդոտի վերաբերյալ եզրակացությունը տրվում է հիմք ընդունելով Ուղեցույցի 3-րդ կետով սահմանված հարթությունների բնութագրերը:

7. Աերոդրոմ շահագործողի կողմից՝

1) Տարին առնվազն մեկ անգամ՝

ա. Փաստացի դիտարկամ (մոնիտորինգի) միջոցով անցկացվում է մոնիտորինգ Ուղեցույցի 4-րդ կետի համաձայն աերոդրոմի 2a և 2b գոտիներում հաշվառված և առկա խոչընդոտների համապատասխանության, ինչպես նաև Կարգի 39-րդ կետով սահմանված օբյեկտների առկայության նկատմամբ: Նշված գործընթացի շրջանակներում վերահսկվում են հաշվառված խոչընդոտների ցերեկային և(կամ) գիշերային մականշումները, որոնք պետք է համապատասխանեն Չիկագոյին Կոնվենցիայի N14 Հավելվածի պահանջներին:

բ. Իրականացվում է վերահսկողություն աերոդրոմի տարածքի սահմաններում գտնվող 3-րդ և 4-րդ գոտիներում առկա բնական խոչընդոտների բարձրությունների, ինչպես նաև արհեստական խոչընդոտների ցերեկային և գիշերային մականշումների նկատմամբ: Սույն պարբերությունում նշված վերահսկողությունն իրականացվում է ձմեռային ժամանակաշրջանին նախապատրաստման աշխատանքների շրջանակներում:

2) Աերոդրոմի տարածքում նոր կառուցվող խոչընդոտների շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվում է վերահսկողություն խոչընդոտի և օգտագործվող շինարարական տեխնիկայի բարձրությունների նկատմամբ:

3) Սույն կետում նշված գործընթացը կարող է իրականացվել Աերոդրոմ շահագործողի կողմից ստեղծված համապատասխան ծառայության կողմից կամ կապալառու կազմակերպության միջոցով:

4) Աերողրոմ շահագործողի դիմումի համաձայն Կոմիտեն աջակցում է Աերողրոմ շահագործողին կամ կապալառու կազմակերպությանը, եթե սույն կետով սահմանված գործընթացի շրջանակներում առաջանում է սեփականության իրավունքով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատկանող տարածքներ մուտք գործելու խոչընդոտներ:

ա. Եթե սույն ենթակետում նշված գործընթացն իրականացվում է Աերողրոմ շահագործողի կողմից ստեղծված համապատասխան ծառայության կողմից ապա այն պետք է ապահովվի չափագրումներ կատարելու համար անհրաժեշտ չափիչ սարքերով:

8. Աերողրոմի 2a և 2b գոտիներում հաշվառված և փաստացի առկա խոչընդոտների համապատասխանության դեպքում կազմվում է արձանագրություն, նշելով դիտարկումների անցկացման ժամկետները և շրջանները: Արձանագրությունը հաշվետվության ձևով ներկայացվում է Կոմիտե:

9. Աերողրոմի 2a և 2b գոտիներում հաշվառված և փաստացի առկա խոչընդոտների անհամապատասխանության դեպքում կազմվում է արձանագրություն, նշելով՝ դիտարկումների անցկացման ժամկետները, շրջանները, նոր առաջացած խոչընդոտի(ների) տեսակը կամ նշանակությունը, աշխարհագրական կորդինատները, հարաբերական ու բացարձակ բարձրությունները:

1) Եթե Ուղեցույցի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ սահմանված մոնիտորինգն իրականացվում է կապալառու կազմակերպության կողմից, ապա սույն կետում նշված անհամապատասխանության վերաբերյալ արձանագրությունը տրամադրում է Աերողրոմ շահագործողին, որը համապատասխան գրությամբ այն ներկայացնում է Կոմիտե:

2) Եթե մոնիտորինգն իրականացվում է Աերողրոմ շահագործողի կողմից, ապա անհամապատասխանության վերաբերյալ արձանագրությունն անմիջապես ներկայացվում է Կոմիտե:

3) Ստացված արձանագրությունների հիման վրա Կոմիտեն անցկացնում է աերոնավիզացիոն հետազոտություններ և եթե դրանց արդյունքում արձանագրվում է, որ խոչընդոտը սպառնում է թռիչքների անվտանգությունը ձեռնարկում է միջոցառումներ՝ ուղղված թռիչքների անվտանգության ապահովմանը:

10. Ուղեցույցի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<բ>> պարբերությունով սահմանված վերահսկողությունների ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում Աերողրոմ շահագործողը ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված դրանց վերացմանը:

11. Աերողրոմ շահագործողը Ուղեցույցի 7-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ծառայությանը կամ կազմակերպությանն ապահովում է աերողրոմի շրջակայքի թղթային կամ էլեկտրոնային գծապատկերներով, Ուղեցույցի 3-րդ կետում նշված հարթությունների համաձայն, որի վրա նշվում են աերողրոմի 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտիների հաշվառված խոչընդոտները:

12. Ելնելով անհրաժեշտությունից Աերողրոմ շահագործողն իրականացնում է աերողրոմի 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտիների տեղանքի և օդային խոչընդոտների վերաչափագրում և վերահաշվառում:

1) Սույն կետում նշված անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել Ուղեցույցի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված մոնիտորինգի արդյունքներով:

2) Օդային խոչընդոտների վերաչափագրման և վերահաշվառման վերաբերյալ հիմնավորված որոշում կարող է կայացնել նաև Կոմիտեն: Որոշման ընդունման համար հիմք են հանդիսանում Ուղեցույցի 9-րդ կետի համաձայն ստացված տվյալները: